

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 1

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «ՀԱՄԱՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի միջև 2025թ. սեպտեմբերի 08-ին կնքված N ՀՏՁՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/4/3 ծածկագրով «ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի միջնակարգ դպրոցի վերանորոգում» ծրագրի ընթացքում հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան

« 14 » 10 2025թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀԱՄԱՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Հ. Լևոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի 2025թ. սեպտեմբերի 08-ին կնքված N ՀՏՁՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/4/3 ծածկագրով «ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի միջնակարգ դպրոցի վերանորոգում» ծրագրի ընթացքում հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի Հավելված 1-ի ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված 1-ի :
2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:
3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:
4. Համաձայնագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:
5. Սույն Համաձայնագրի դրույթները տարածվում են Պայմանագրի կնքման պահից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

«ՀԱՄԱՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31

Հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մ, ք.Եղվարդ, Սաֆարյան 79

ՀՎՀՀ՝ 00846441

ՀՎՀՀ՝ 03309254

Հ/Հ՝ 1150006797427465

Հ/Հ՝ 900011058501

Կենտրոնական գանձապետարան  
Գործադիր տնօրեն  
Ս. Բաղինյան

ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ  
Տնօրեն՝  
Վ.Սամսոնյան



Հավելված N 1  
 2025թ. սեպտեմբերի 08-ին  
 N « ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/4/3 » ծածկագրով  
 ծառայությունների գնման պայմանագրի  
 « 14 » 10 2025թ.  
 կնքված Համաձայնագիր 1-ի

Հավելված N 1  
 2025թ. սեպտեմբերի 08-ին  
 N « ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/4/3 »  
 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

« Հրամ

Ձ/հ	ԳՄԱ ծածկագիր՝ CPV	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը*
12	98111140/46	«ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի միջնակարգ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն	դրամ	2 000 000	1	ՀՀ Կոտայքի մարզ, Արզնի	Պայմանագրի կնքման օրից մինչև շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումը

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

**ՀՀ տարբեր մարզերում մի շարք դպրոցների վերանորոգման աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության իրականացման**

**Մատուցվող ծառայությունների համառոտ բնութագիրը**

Վերանորոգման աշխատանքների ընթացքում Խորհրդատուն պետք է պարբերաբար այցելի շինհրապարակ և վերահսկի կատարվող աշխատանքների համապատասխանությունը ծավալաթերթ/թերթությունների ակտին և նախահաշվին:

Խորհրդատուն վերահսկման աշխատանքների ընթացքում պարտավոր է՝

1. Կազմակերպել շինհրապարակի այցելություններն ըստ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցի:

2. Անհրաժեշտության դեպքում, այցելել շինհրապարակ ըստ Պատվիրատուի մասնագետների պահանջի:

3. Կատարել անհրաժեշտ խորհրդատվություններ Պատվիրատուի մասնագետներին և Կապալառուին շինարարության ընթացքում:

4. Գրավոր տեղեկացնել Պատվիրատուին հայտնաբերված թերությունների և շեղումների մասին, ներառյալ համապատասխանությունը անվտանգության ապահովմանը:

5. Համաձայնեցված լուծումներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում տեղեկացնել Պատվիրատուին և ստանալ նրա համաձայնությունը:

6. Պատվիրատուի և այլ շահագրգիռ կողմերի համաձայնեցմանը ներկայացնել փոփոխված ծավալաթերթերը, Կապալառուի պայմանագրային նախահաշվով չնախատեսված աշխատանքների նախահաշվային արժեքները:

7. Մասնակցել ինժեներական կոմունիկացիաների և կառույցների, խողովակաշարերի, էլեկտրասարքավորումների փորձարկումներին՝ ստորագրելով համապատասխան փորձարկման ակտեր:

8. Ուսումնասիրել շինարարության ընթացքում առաջացած խնդիրները և Պատվիրատուին ներկայացնել դրանց լուծման տարբերակները և աշխատանքային ծավալները: Նոր, պայմանագրային նախահաշվում չներառված աշխատանքների ի հայտ գալու դեպքում ներկայացնել նաև այդ աշխատանքների միավոր գները՝ նախահաշվի տեսքով:

